ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» սեպտեմբերի 2013թ. **N _____ -Ն**

ՈՐՈՇՈՒՄ
ԱՆՏՈՆ ՔՈՉԻՆՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2013թ. մարտի 26-ի հ. 233-Ա որոշմամբ ստեղծված՝ պետական, կուսակցական գործիչ Անտոն Քոչինյանի 100-ամյակը նշելու հոբելյանական հանձնաժողովի առաջարկությունը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ. 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևանի Նոր Նորք վարչական շրջանի Հ. Թևոսյան փողոցի շարունակությունը կազմող և Երևանի քաղաքապետի 08.04.2002թ. հ. 564 որոշմամբ Ա. Քոչինյան փողոց անվանակոչված «Մայակ» թաղամասին հարող հատվածը վերանվանել Հ. Թևոսյան փողոց։

2. Անվանակոչել Երևանի Կենտրոն վարչական շրջանում Արամի փողոցից սկսվող Տերյան փողոցի շարունակություն հանդիսացող փողոցը մինչև Ամիրյան փողոցից սկսվող Զաքյան փողոց՝ պետական, կուսակցական գործիչ Անտոն Քոչինյանի անունով։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՆՏՈՆ ՔՈՉԻՆՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Անտոն Քոչինյանը ծնվել է 1913թ. Լոռու մարզի Վահագնի գյուղում:
Ավարտել է Երևանի Կոմունիստական գյուղատնտեսական դպրոցը: Աշխատել է որպես լրագրող, ապա՝ խմբագիր: Եղել է ՀԼԿԵՄ ԿԿ առաջին քարտուղար /1939-1941/:
Անտոն Քոչինյանն ավելի քան 13 տարի աշխատել է որպես նախարարների /Մինստրների/ խորհրդի նախագահ: Անտոն Քոչինյանի պաշտոնավարության ժամանակ սկսեց կառուցվել Արփա-Սևան ջրատարը: Երևանում մետրոպոլիտեն կառուցելու նախաձեռնությունը պատկանում է Անտոն Քոչինյանին. այն հետո կյանքի կոչեց Կարեն Դեմիրճյանը: Յակով Զարոբյանի /ՀԿԿ ԿԿ առաջին քարտուղար/ ստորագրության հետ ատոմային էլեկտրակայանի կառուցման որոշման տակ դրված է նաև Անտոն Քոչինյանի ստորագրությունը:
53-ամյա Մինիստրների խորհրդի նախագահը, որը 13 տարի ղեկավարել էր գործադիր իշխանությունը, 1966-ին դարձավ ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար և մինչև 1974թ. ղեկավարեց Հայաստանը: Նրա պաշտոնավարման օրոք էր, որ կառուցվեց Եղեռնի հուշարձանը:
Անտոն Քոչինյանը վախճանվել է 1989թ.:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՆՏՈՆ ՔՈՉԻՆՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Անտոն Քոչինյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՆՏՈՆ ՔՈՉԻՆՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Անտոն Քոչինյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ